ՀՏԴ 725.1.012

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա.Ա.Բայրամյան

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայացված է Հրազդան քաղաքի հասարակական սպասարկման օբյեկտների համակարգի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը: Դիտարկվել են Հրազդան քաղաքի հիմնական երեք թաղամասերը: Թաղամասերից մեկի՝ Միկրոշրջանի համար կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմվել է հասարակական սպասարկման օբյեկտների ներկա վիճակագրական գրաֆիկ: Ներկայացված են Հրազդան քաղաքի հասարակական սպասարկման օբյեկտների համակարգի խնդիրները և առանձնահատկությունները:

Առանցքային բառեր. *ք.Հրազդան, հասարակական, սպասարկում, մարզկենտրոն, ճարտարապետություն*

Հետխորհրդային շրջանում Հրազդան քաղաքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մնացած մարզկենտրոններում հասարակական սպասարկման օբյեկտները բարոյապես և ֆիզիկապես արժեզրկվել են և այսօր չեն համապատասխանում ներկայացվող պահանջներին:

Հայաստանի Հանրապետությունն այն տարածաշրջաններից է, որտեղ ժամանակին տեղի է ունեցել քաղաքային նոր կազմավորումներ և զարգացում, գոյություն ունեցող բնակավայրերի աննախադեպ աճ: Քաղաքների համար կարևորագույն դեր ու նշանակություն ունեին սպասարկման համակարգերի համաչափ զարգացումն ապահովող հասարական կենտրոնները՝ առևտրական, կինոթատրոններ, ճաշարաններ, հյուրանոցներ, կենցաղ–սպասարկման (լվացքատներ, ակումբներ, հագուստի, կոշիկի վերանորոգում, վարսավիրանոց, քիմմաքրման կետեր, փոստատներ, լուսանկարչատներ) և այլն:

Հրազդանը տեղակայված է Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան մասում: Հյուսիսից եզերված է Փամբակի լեռնաշղթայով, հարավ-արևմուտքից՝ Ծաղկունյաց լեռնաշղթայով: Արևելքից սահմանն անցնում է Գեղամա լեռնաշղթայով՝ մինչև Գութանասարի գագաթը: Քաղաքի տարածքով հոսում է Հրազդան գետը, որի մեջ թափվում են Մարմարիկ և Աղվերան գետակները:

Հրազդանի շրջանի (նախկինում՝ Ախտայի) շրջկենտրոնը 1930-59 թթ. եղել է Ախտա գյուղը, որը ներկայիս Հրազդան քաղաքի հարավային թաղամասն է: 1959թ. Ախտա գյուղը դասվել է հանրապետության քաղաքատիպ ավանների շարքին և նույն թվականին վերանվանվել Հրազդան քաղաքատիպ ավան:

ՀՍՍՌ Գերագույն Սովետի 1963թ. հունվարի 12-ի «Հայկական ՍՍՌ-ում վարչատարածքային փոփոխությունների մասին» հրամանագրով լուծարվել են

աշխատավորների, դեպուտատների, Աթարբեկյանի և Ջրառատի գյուղական սովետները և Աթարբեկյան (այժմ՝ Վանատուր), Ջրառատ, Կաքավաձոր, Մաքրավան գյուղերը մտել են Հրազդան քաղաքի կազմի մեջ: Հրազդանը դարձել է շրջանային ենթակայության քաղաք: Հրազդանը, ձեռք բերելով քաղաքի կարգավիճակ, աստիճանաբար կերպարանափոխվել է: Այդ ժամանակահատվածում ք.Հրազդանի բնակչությունը կազմել է մոտ 61 հազար մարդ, որի հիմնական մասը (մոտ 47 հազար մարդ), բնակվել է բազմաբնակարան շենքերում: 1992-93թթ. տեղի ունեցած սեփականաշնորհման գործընթացի արդյունքում քաղաքաբնակ հրազդանցիները ձեռք բերեցին մոտ 4000 *հա* վարելահող, խոտհարքներ, մոտ 15 հազար գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Ներկայումս պահում են տասնյակ հազարավոր թև թռչուններ:

Սեփականաշնորհումն օրինական խթան է հանդիսացել քաղաքի անհատական բնակելի թաղամասերի կտրուկ շրջադարձի և գյուղական կենցաղի համար:

Ք.Հրազդանի ձգվածությունը կազմում է մոտ 22 *կմ*: Համայնքային ենթակայության ավտոճանապարհների և փողոցների երկարությունը կազմում է 192 *կմ*, ջրամատակարարման ցանցի միագիծ երկարությունը՝ մոտ 300 *կմ*, մոտավորապես այդքան էլ կոյուղագծերի երկարությունն է:

1995 թ. դեկտեմբերից ք.Հրազդանը դարձել է Կոտայքի մարզկենտրոն: Քաղաքն ունի 1 դրամատիկական թատրոն, 1 պատկերասրահ, 2 թանգարան, 8 գրադարան, 1 մասնավոր բուհ, 2 ուսումնարան, 2 քոլեջ, 13 հանրակրթական, 1 ավագ և 1 հատուկ դպրոց, 13 մսուր-մանկապարտեզ, 2 սպորտային, 2 երաժշտական, 2 մանկական արվեստի դպրոց, քաղաքապետարանի մանկապատանեկան ստեղծագործական, մշակույթի և երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոններ, ձմեռային մարզաձևերի և մանկապատանեկան մարզադպրոցներ [1]:

Ք.Հրազդանի առաջին գլխավոր հատակագիծը, որն ընդգրկել է Ներքին Ախտա և Ալափարս գյուղերը, մշակվել է 1927-28 թթ. ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի կողմից: Հաջորդը, որն ընդգրկել է նաև Մաքրավան, Աթարբեկյան, Ջրառատ և Կաքավաձոր գյուղերը, Գյումուշի ՀԷԿ-ի արհեստական լճի շրջակա հարթավայրերն ու բարձրությունները՝ 1961-63 թթ. (ճարտարապետներ՝ Մ.Գրիգորյան, Է.Ալթունյան):

1978-80 թթ. կազմվել է նոր գլխավոր հատակագիծ (120 հազար բնակչի համար, 2010թ. հաշվարկային ժամկետով, ճարտարապետներ՝ Ս.Մանուկյան, Է.Ալթունյան, Վ.Տոնիկյան, Թ.Բալայան, Է.Հարությունյան, ինժեներ Գ.Պողոսյան և ուրիշներ):

Այսօր քաղաքը կազմված է 3 հիմնական զանգվածներից՝ հարավային, կենտրոնական և հյուսիսային: Հիմնական արդյունաբերական շինությունները կենտրոնացված են հյուսիսային արդյունաբերական հանգույցում (ճարտարապետներներ՝ Ս.Մանուկյան, Վ.Տոնիկյան, Ժ.Հովսեփյան, Բ.Պատրիկյան): 1974թ. մշակվել է ք.Հրազդանի հարավային բնակելի շրջանի մանրամասն հատակագծման նախագիծը (ճարտարապետներ՝ Ա.Ալոյան, Կ.Ղազարյան), 1969 թ. կազմվել է ք.Հրազդանի վարչամշակութային կենտրոնի նախագիծը (ճարտարապետներ՝

Մ.Գրիգորյան, Ս.Մանուկյան, Վ.Տոնիկյան, Թ.Բալայան), վերակազմվել 1977-85 թթ. (ճարտարապետներ՝ Մ.Միքայելյան, Գ.Գրիգորյան)։ Հյուսիսային զանգվածի միկրոշրջանների կառուցապատման նախագծերը կազմվել են 1964-88 թթ. (ճարտարապետներ՝ Մ.Հայրապետյան, Լ.Մելքոնյան, Է.Ալթունյան, Լ.Հովհաննիսյան, Ն. և Գ.Պատրիկյաններ)։ Ք.Հրազդանում կառուցվել են ՀԷԿ և ակումբ (1958 թ., ճարտ.՝ Տ.Մարության), «Ծովինար» ռեստորանը (1960 թ., ճարտ.՝ Ռ.Իսրայելյան), հյուրանոց (1967 թ., ճարտ. Հ.Աչյան), մարզպետարանի, քաղխորհրդի միացյալ շենքը (1976 թ., ճարտ. Գ.Գրիգորյան), ավտոկայանը (1978 թ., ճարտ. Հ.Առաքելյան), դպրոցականների պալատը (1978 թ., ճարտ. Ս.Քյուրքչյան), էներգետիկների պալատը (1979 թ., ճարտ. Լ.Հովհաննիսյան), ավտոհանգրվանը (1980 թ., ճարտ. Ռ.Հովսեփյան) և այլն [2]։

Հրազդան քաղաքի հասարակական սպասարկման օբյեկտների ներկա վիճակը գնահատելու համար դիտարկվել են երեք հիմնական թաղամասերը՝ Սոլակը (Ախտա), կենտրոնը (Ռայկոմ) և Միկրոշրջանը։

Միկրոշրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմվել է գրաֆիկ (նկ.1), որտեղ տրված է Միկրոշրջան թաղամասի հասարակական սպասարկման օբյեկտների ներկա վիճակագրությունը։



Նկ. 1. Միկրոշրջան թաղամասի հասարակական սպասարկման օբյեկտների ներկա վիճակագրությունը

Սոլակից կենտրոն տանող ճանապարհին, ջրամբարի ափին է գտնվում Ռ.Իսրաելյանի հեղինակած «Ծովինար» ռեստորանը (նկ.2)։ «Ծովինար» ռեստորանն այն եզակի հասարակական սպասարկման օբյեկտներից է, որը չի կորցրել իր գործառույթը, սակայն

կորցրել է ճարտարապետագեղարվեստական կերպարը՝ շենքի օգտագործելի մակերեսը մեծացնելու նպատակով աղավաղվել է շենքի ճարտարապետությունը։

Նկ. 2. «Ծովինար» ռեստորանի նախկին և ներկա տեսքը

Հրազդան քաղաքի կարևորագույն հասարակական սպասարկման օբյեկտներից է երկաթուղու կայարանը։ Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այն ունի սպասարկման լիարժեք կազմակերպմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ։ Կայարանից ոչ հեռու գտնվում է քաղաքի համար կրկին կարևոր նշանակություն ունեցող ավտոկայանը։ Այսօր այն ամբողջությամբ կորցրել է իր գործառույթը։ Շինությունը ծառայում է որպես հանդիսությունների սրահ։ Ավտոկայանին կից տեղակայված է Խորհրդային մոդեռնիզմի ճարտարապետական մի հետաքրքիր շինություն (նկ.3), որը նախկինում եղել է հուշանվերների խանութ։ Այսօր այդ շինությունն մատնված է անուշադրության և ունի խնամքի կարիք։

Նկ. 3. Ավտոկայարանին կից հուշանվերների խանութ

Հրազդան քաղաքի քաղաքացիների հասարակական կյանքում մեծ նշանակություն ունի քաղաքային այգին։ Այգուն կից տեղակայված է չգործող հյուրանոց։

Ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ ք.Հրազդանում այսօր հասարակական սպասարկման համակարգում առկա են ինչպես լուրջ քաղաքաշինական խնդիրներ, այնպես էլ առանձին շենքերի և շինությունների վերակառուցման, արդիականացման և համակարգի նորացման խնդիրներ: Որոշ սպասարկման օբյեկտներ կորցրել են իրենց նշանակությունը և չեն ծառայում նպատակին, որոշներն էլ ընդհանրապես բացակայում են: Բացակայող օբեկտներից են՝ հյուրատները, առողջապահական հիմնարկները, ժամանցի վայրերը՝ ակումբ, սրճարան, կինոթատրոն և այլն:

Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, քանակական առումով Հրազդան քաղաքում գերիշխում են առևտրի սպասարկման օբյեկտները, փոխարենը բացակայում են ժամանցի օբյեկտները և հյուրատները: Առողջարանային հիմնարկներն էլ այնքան սակավաթիվ են, որ չեն ապահովում լիարժեք սպասարկում: Պետք է հատուկ նշել, որ այսօր շատ կառույցներ բարոյապես չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին, համալիր արդիականացման և զարգացման կարիք ունեն: Մյուս կողմից, տարբեր տեղերում իրականացվել է շենքերի օգտագործում (այլ գործառույթներով), ինչպես օրինակ՝ նախկին շախմատի տունը գործում է որպես առևտրի կենտրոն: Գործող սպասարկման օբյեկտների մեծամասնությունը, որոնք կառուցվել են խորհրդային տարիներին, այսօր ֆիզիկական առումով խնդրահարույց են և պահանջում են բարեկարգում, ամրացում և մշտական խնամք: Ընդհանուր առմամբ, Հրազդան քաղաքի հասարակական սպասարկման համակարգի ներկա խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է հասարակական սպասարկման համակարգի անմիջական համալրում: Առաջնային է այս համակարգի օբյեկտների հատակագծատարածական կազմակերպման, ճարտարապետական կերպարի վերանայման և նորովի մեկնաբանման հիմնախնդրի հրատապ և համալիր կարգավորումը:

А.А.Байрамян

ОСОБЕННОСТИ СИСТЕМЫ ОБЪЕКТОВ ОБЩЕСТВЕННОГО ОБСЛУЖИВАНИЯ ГОРОДА РАЗДАН

Представлено исследование систем обслуживания общественных объектов г.Раздан. Были рассмотрены три основных района г.Раздан. В результате исследования одного из районов (Микрорайон) сформировался статистический график обслуживания общественных объектов на данный момент. Представлены проблемы и спецификации обслуживания общественных объектов г.Раздан.

Ключевые слова: *г.Раздан, общественный, обслуживание, региональный центр, архитектура*

A.A.Bayramyan

THE FEATURES OF PUBLIC SERVICE OBJECTS' SYSTEM OF HRAZDAN CITY

Study concerning the system of servicing public facilities of Hrazdan is given. Three main districts of Hrazdan were considered. As a result of one of the districts' study (the Microdistrict), a statistical schedule

for servicing public facilities at present has been formed. Some problems and specification of servicing public facilities of Hrazdan are discussed.
***Keywords**: Hrazdan, public, service, regional center, architecture*

Գրականություն

1. http://www.hrazdan.am/index.php?id=4&lg=2

2. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D6%80%D5%A1%D5%A6%D5%A4%D5%A1%D5%B6_(%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84)

Բայրամյան Աշոտ Արտյոմի *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, հայցորդ, (374)99050403, ashotbayramyan@gmail.com*
Байрамян Ашот Артемович *(РА, г.Ереван) – НУАСА, кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, соискатель, (374)99050403, ashotbayramyan@gmail.com*
Bayramyan Ashot Artyom, *(RA, Yerevan) – NUACA, chair of theory of architecture, restoration and reconstruction of historical-architectural heritage, fine arts and history, applicant, (374)99050403, ashotbayramyan@gmail.com*

Ներկայացվել է՝31.10.2017թ.
Ընդունվել է տպագրության՝10.11.2017թ.